ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ու Մ

**N** 186 **Ա** **ք.Արտաշատ**

„04" հուլիսի **2024թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N 91 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի <դ> ենթակետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Գոռավանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման N 18062024-03-0042 վկայականը.

Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2024 թվականի ապրիլի 8-ի <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2017 թվականի սեպտեմբերի 20-ի N 94 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> N91 որոշման 2-րդ կետով հաստատված <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Գոռավանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

5) Դպրոցի գտնվելու վայրն է՝ 0608 Մարզ Արարատ, համայնք Վեդի գյուղ Գոռավան Գ. Մարզպետունու փողոց 8:

2. Հաստատել <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Գոռավանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը:
3. Հանձնարարել դպրոցի տնօրենին՝ ռեգիստրում իրականացնել կատարված փոփոխության պետական գրանցումը:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Восстановимая подпись

X

Ստորագրող
ԱՐՏԱՎԱԶԴ ՆԱԶԱՐԵԹՅԱՆ
2409881092

Подписано: NAZARETYAN ARTAVAZD 2409881092 Ա. ՆԱԶԱՐԵԹՅԱՆ